Պարսկական կառավարները մեծ ազդեցություն են գործել Հայաստանի եւ Վրաստանի հասարակական համակարգերի վրա, թեպետ Հայաստանում ազնվականները (նախարարները) անհամատեղ ապելի անկախ էին թագավորներից, բան Վրաստանի վերահսկվող (ազնուրդները): Երկու երկրներն էլ ենթարկվել են հունական, իսկ ավելի ուշ՝ հռոմեական որոշակի ազդեցության: 4-րդ դարի սկզբին Հայաստանը եւ Վրաստանը քրիստոնեություն ընդունելով՝ հարավում եւ արեւելքում դարձան քրիստոնեական Եւրոպայի առաջավոր պահակները նախ հեթանոսության, ավելի ուշ՝ իսլամի դեմ:

Բայց որքան էլ այս երկու ժողովուրդները նման էին, նրանց պատմական ուղիները բաժանվեցին: Հայերն ստեղծեցին քրիստոնեության զուտ իրենց տեսակը՝ Բյուզանդական կայսրության ուղղափառ եկեղեցուց անջատ: Վրացիներն ընդունեցին ուղղափառությունը եւ հեռացան հայ եկեղեցուց: Այն ժամանակ, երբ հայերը հարավից ենթարկվում էին արաբ-մուսուլմանների ավերիչ ասպատակություններին, իսկ արեւմուտքում եւ արեւելքում կռվում օսման-բուրքերի եւ պարսիկների դեմ, վրացիներն ապահով կենցաղով ապավինել էին իրենց լեռնային կիրճերին: 11-րդ դարում, երբ բուրք սելջուկներն ավերեցին Հայաստանը, վրաց արքաները հայ ազնվականներին ապաստան տրվեցին իրենց մոտ: Հայերը դարձան վրաց գահի օրինապահ ծառաներ, իսկ շատերը քաղաքներում բնակություն հաստատեցին եւ կազմեցին Վրաստանի վաճառականների դասը:

19-րդ դարի սկզբին ազգային վերածննդի, վրաց ազնվականության ու հայ առևտրականների միջև մրցակցության ուժեղացման հետևանքով տեղի ունեցան հասարակական եւ ազգային բախումներ: Սակայն երկու ազգերի համագոյակցությունը շարունակվեց, իսկ Թիֆլիսը՝ Վրաստանի պատմական մայրաքաղաքը, իրականում դարձավ հայ մշակույթի եւ քաղաքական ակտիվության խոշոր կենտրոն:

Անկախության տարիներին դաշնակցական Հայաստանը կարճատև պատերազմ մղեց մեծքնիկյան Վրաստանի դեմ: Չկարողանալով համատեղ դիմագրավել կորկանկի վտանգը (ի դեմս քուչուկյան Ռուսաստանի եւ վերածնվող արաբությունների թուրքիայի), երկուսն էլ ընկան Կարմիր բանակի հարվածներից:

Մոցի պատերազմի կործանարար հետևանքների մասին խոսելիս անհրաժեշտ է նաև անդրդառնալ Իրաքի պարտությունից հետո շրջանում կատարված տեղաշարժերի եւ հաղթող կողմերի ձեռքբերումների հարցին:

Քննարկման է արժանի նաև Իրանի հարցը, որը չմասնակցելով հանդերձ ռազմական գործողություններին՝ հարթող դուրս եկավ պատերազմից: Այն ժամանակ, երբ բազմազգ ուժերը կործանիչ հարվածներ էին հասցնում Սադդամի ռազմական մեքենային, Իրանը իր նկուն քաղաքականությամբ գրավեց աշխարհի ուշադրությունը: Բուվեյրի գրավումից հետո, հապճեպ կերպով կնքված մի պայմանագրի համաձայն, Իրանը հետ ըստացավ ութամյա պատերազմի ընթացքում կորցրած տարածքները: Դրա հետ միասին նաև հօգուտ Իրանին փոխանակվեցին ռազմագերիները: Իսկ հետո՝ իրան-իրաքյան բախման վնասների փոխհատուցման համար կալանվեցին Իրանում ապաստանած ավելի քան 130 իրաքյան ռազմական ինքնաթիռներ: Այսպիսով, Իրանը տեր դարձավ ժա-



Խորհրդային իշխանության տարիներին հայերն ու վրացիները կառուցեցին քիչ թե շատ զարգացած արդյունաբերական երկիր՝ կիրթ ու գրագետ բնակչությամբ, բան իրենց պատմության որևէ շրջանում: Մտնող առանց նոր բաների դասակարգը եւ նոր մտավորականությունը: Թիֆլիսը մնաց վրացիների մայրաքաղաք, իսկ հայերը Երևանը ծուլ ու թմրած գավառաքաղաքից դարձրին միլիոնանոց աշխույժ մի քաղաք:

Սակայն խորհրդային համակարգի խոր քայքայումը, նրա բյուրոկրատական անկողությունը, քաղաքական ճնշումներն ու ազգային դրսևորման սահմանափակումը առաջացրին ուժեղ դժգոհություն եւ, ի վերջո՝ ընդդիմություն կոմունիստական վարչակարգի դեմ: Կարաբաղյան շարժումը Հայաստանում եւ ազգայնականության մեջ Վրաստանում հիմք ստեղծեցին, որ ՀՀԸ-ն ու «Կուր սեղանը» հաղթեց 1990 թվականի համապատասխանաբար ամռան եւ աշնան ընտրություններում:

Հայերի թիվը Վրաստանում (1989 թվականի մարդահամարի տվյալներով) կազմում է 437.000, որը հանրապետության բնակչության 8 տոկոսն է: 1974 թվականի համամատչությանը նկատմամբ է հայ բնակչության թվի նվազում: Վերջին տասնամյակների ընթացքում հայերը լքում են Վրաստանը, բանի որ նրանց համար շատ է դժվարացել Վրաստանի քաղաքային կենտրոններում հայ մշակութային լիարժեք կյանքով ապրելը:

Հայկական մշակութային հուշարձաններն ու շենքերը, ինչպես Խոջաբաղը Թիֆլիսում, կամ ավերվել են, կամ էլ զավթվել բնակիչների կողմից: Կովկասի հայկական առաջին դպրոցի՝ Ներսիսյան ճեմարանի շենքը բազմել է Թիֆլիսի բարձունքներից մեկի վրա եւ երեսուն է քաղաքի բոլոր մասերից, սակայն մոտիկից պարզվում է, որ այն վերափոխվել է վրացական տեխնիկական դպրոցի ու մասնավոր անմիջապես վիճակի: Ի պատիվ Վրաց եկեղեցու պատրիարք Իլյա 2-րդի պետք է ասել, որ, այնուամենայնիվ, նա մերժեց այդ շենքը վրացական հուշարձան հայտարարելու առաջարկը:

Կարաբաղյան շարժման սկզբում շատ վրացիներ էին պաշտպանում Կարաբաղը Հայաստանին միացնելու պահանջները, սակայն շատերն էլ զգուշանում էին հան-

րապետությունների միջև սահմանների փոփոխության հարցում: Վրացիներն իրենց խոցելի են զգում, բանգի Ախալցխայում եւ Ախալքալսկում ստվարածավալ հայություն կա: Մյուս կողմից՝ արխաղներն ու օսերը նույնպես ցանկանում են դուրս գալ Վրաստանի կազմից: Վրացիներին մտահոգում են նաև Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ընդհանուր սահմանի երկայնքով ապրող ադրբեջանցիները:

Վրաստանի նոր ազգային կառավարությունը Չիխաղ Գամախուրդիայի ղեկավարությամբ պարզ հասկացրեց, թե այն պահանջելու է Վրաստանի ամբողջականությունը եւ այսուհետեւ լուր վրացիներն են լուծելու Վրաստանի վերաբերվող բոլոր հարցերը: 1990 թվականի դեկտեմբերին վրացական խորհրդարանը վերացրեց Օսեթիայի հանրապետության ինքնավարությունը: Հանրապետությունում ազգայնականության աճը եւ այլ ազգերի նկատմամբ անհանդուրժողականության ուժեղացումը անհանգստացնում են Թիֆլիսի հայերին, որոնց մտահոգում է իրենց ապագան անկախ Վրաստանում: Թիֆլիսյանները հիմնեցին Հայ Մշակույթի ընկերություն, որին անդամակցում են 35000 հոգի: Ախալքալսկում հիմնվեց ավելի շուտ քաղաքական ուղղվածությամբ «Զավախ» կազմակերպությունը: 1990 թվականի մայիսին Ախալցխայի եկեղեցու շուրջը ծավալված վիճաբանությունները վերածվեցին հայերի ու վրացիների միջև բախումների, որը տարածվեց Ախալցխայում եւ Ախալքալսկում:

Ադրբեջանի կազմակերպած շրջափակումների հետևանքով հայերն առավել կախում ունեն Վրաստանից, բանի որ սրա տարածքով են ապրողները փոխադրվում: Հայերը հասկանում են, որ անհրաժեշտ է պահպանել վրացիների հետ քաղաքական կապերը, բանի որ Հայաստանը երեք կողմից շրջապատված է մուսուլմաններով: Սակայն Երևանը դեռ անվստահություն է տածում վրացիների հանդեպ: Մի կողմից որոշ հայեր ծղուտ են վերակազմել Պատմական Հայաստանը, որն ընդգրկում է նաև հայաբնակ Արցախը, Ախալցխան եւ Ախալքալսկը: Նման մի ծրագիր ուներ դաշնակցությունը ժամանակին: Մյուս կողմից իրականության զգացումը, դաշնակցուրդն ունենալու անհրաժեշտությունը եւ հայերի անպաշտպանվածությունը ստիպեցին Հայաստանի այժմյան ղեկավարությանը գործել ավելի զգույշ:

Այժմ Անդրկովկասյան յուրաքանչյուր հանրապետություն իր ջանքերն է կենտրոնացնում ներքին խնդիրների լուծման շուրջը, փորձում վերականգնել սեփական տնտեսությունը եւ հասնել ազգային համաձայնության: Սակայն արդեն ծայրեր են հնչում, որ ապագայում անկախության հեռանկարները պահանջում են ռեզիստանցիոն համագործակցություն: Չնայած հայերն ու ադրբեջանցիները ի վիճակի չեն խաղաղ ճանապարհով լուծել (առնվազն այժմյան պայմաններում) տարածքային վեճերը, սակայն այս խնդիրները, ինչպիսիք են տրանսխանկազ գաղափարը եւ բնապահպանությունը, ընդհանուր շահերից ելնելով կարող են միացնել 3 հանրապետությունների:

Քչերն են խոսում նոր Անդրկովկասյան ֆեդերացիայի մասին, սակայն ընդհանուր խնդիրներով զբաղվող ռեզիստանցիոն հաստատությունները կարող են հանդես գալ որպես անկախության հուշակարգերի եւ սահմանների պաշտպանության գործոններ: □

AIM, փնտրված

# ԱՂՐԲԵՋԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Հասան Գեյրիբե

ԽՍՀՄ-ի համար վճարող հանրապետության մեկ օր առաջ գտնվում էի Բաքվում:

Վերջ է վերջո, հանրապետությունները անջատվում են Խ. Միությունից, թե չեն անջատվում: Գարչում եմ տարսու մի վարորդի. «Ինչպե՞ս ես քվեարկելու»: Պատասխանում է. «Շատ դժվար է կողմնորոշվել... եթե մեր այս հային անկախանանք, շատ դժվար կլինի մեզ համար: Ոչ անխառնվել է մի բան, ոչ չանջատվել...»

Այս պատասխանը հանրապետության վարչապետի հարց է թերում օրակարգ:

Բաքվում ծարձակող պակտությունները եւ իսլամիզմը բավապատկվում են մոլեռանդությանը եւ հասարակական վտանգավոր ակնկոծման արդյունքում: Գաղափարները լի արցունքով, տարածում ու տարածում են պակտությունների ու իսլամիզմի ակտիվները:

Վարորդի խոսքերը կարելի է այսպես վերածնակերպել. անմիջապես անկախանալը կարող է նոր փորձությունների եւ, հետագայում էլ, կարճ ժամանակ անց նաեւ դառն պարտությունների ու պատրանքների փլուզման պատճառ դառնալ: Մուսլիմները արտասանած անեկ երկու բառից մեկը «մեզ վարկ տվեք» կամ «մեզ փող չունեք» է: Եւ իրոք, այստեղ հիմա փող չկա: Այս աղբատությունը միանգամայն արդարացի է անկախության հետեւանալով կյանքի ծանրամասն գուշակությունը: Մինչդեռ դժվար վիճակից փրկվելու ուղին վարորդն, ահա, տեսնում է Իրանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի միավորման մեջ:

Մի բան է պարզ, այս հանրապետության շափապակի ժամանակակից է: Ադրբեջանցիները տարակուսում են: Մուսլիմները էլ շարունակ խոսում է «Գորբաչովի իշխանության օրոք նոր Ադրբեջանի եւ Թուրքիայի միջև հաստատվելիք ինքնուրույն հարաբերություններ» մասին:

Միայն այսպես են ուրվագծվում կակապազյաններով պատված իրողությունները եւ անկախության Ադրբեջանի առջեւ ծառանալիք ծախողունների վտանգը:

Այս վտանգը զգում է նաև պրեզիդենտ Օլալը: Միայն ինչու նա ուզում է տեսնել անկախ Ադրբեջանը իրեն նորոգվող Խորհրդային Միությանը կապված ինքնուրույն մի հանրապետություն: Այս պակտությունը, իր հերթին, նպատակամղում է դեպի տնտեսական կապերի պարզացում: Այսպիսով, կուրորեն անկախանալու փոխարեն, առաջին պլան է մղվում առողջ եւ ամուր կապերով օժտված տնտեսության եւ մշակութային կապի ստեղծման խնդիրը:

Սակայն այս ազդակները դեռեւս անարժանաբար են Բաքվի փողոցներում: Այստեղի ժողովուրդը, Թուրքիայի պետական դրոշմերը ձեռքն առած, սովորական պես հեղեղում է փողոցները:

Տեսանք եւ ուրիշ բաներ: Տեղական փոքրիկ մաֆիայի (Թուրքիայի «մեծ»ի համեմատությամբ՝ խճք.) բեկորների սկսել են այստեղ-այստեղ գլուխ բարձրացնել: «Աթարի»ները, «Մարտիրոս»ները, պակասակ մոլախաղերը Լույսիկ՝ այստեղ մեծ պահանջարկ են վայելում: Ո՞վ գիտի, գուցե այս միջավայրում է կերտվում ադրբեջանցիների մատաղ սերունդը, որ նոր շրջանի կյանք ու նոր հարստություն կերտելու է կոչված: Գաղափարները՝ ֆանտաստիկ միջակող ուղեղը խոսելու ու անորոշ ապագայի ազդանշաններ է ուղարկում:

Միայն այսպիսին էր Բաքուն հանրապետի նախօրեին: □

Ապրիլ 18, 1991

# ԻՐԱՆԸ ԾՈՑԻ ԴԱՏԵՐԱԶՄԻՑ ԶԵՏՈՒ

մանակակից ռազմական տեխնիկայի: Միջազգային քննադատական Իրանի վարկի բարձրացման շնորհիվ, արեւմուտքի եւ արեւելքի հետ նոր հարաբերություններ սկսելու հնարավորության ընձեռնումը նույնպես այդ երկրի շուրջից ձեռքբերումներից է: Այսպիսով, Իրանը, որ հեղափոխության եւ պատերազմի հետեւանալով երկրի խարխիված տնտեսությունը վերականգնելու համար, մեկուսացման պատճառով, զրկվել էր որեւէ ձեռնարկում կատարելու հնարավորությունից, այժմ կարող է արեւմուտքի օգնությամբ դուրս գալ ճգնաժամից:

Իրանի համար գալստիկ է նաև Իրանում տիրող ներկայիս իրավիճակը: Թե՛նրանը, ճարտարապետ մնալով հանդերձ Իրաքի ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությանը, չի կարողանում անտարբերություն ցուցաբերել իր երկրի սահմաններից այն կողմ բորոքված ասպատությունը:

Ներկայումս Իրանում շոշափելի է Իրաքի շիա մահմադականների պաշտպանելու մթնոլորտը: Իրանի ղեկավարները Բասրայի, Նաջաֆի եւ Բայրաթայի գանգվածային կոտորածների առթիվ երկրում սգո օր հայտարարեցին: Իրանի բարձրաստիճան հոգևորականները զայրույթով ընդունեցին համայն շիա մահմադականների առաջնորդ Այաթոլլահ Առուզանն Խոյնի առեւտրային Նաջաֆից: Իրանի կառավարությունն այդ առթիվ խիստ քողոք ներկայացրեց, որից հետո Իրաքը պաշտոնապես հայտարարեց, թե Արուզանն Խոյնի Նաջաֆ է վերադարձվել: Իրանի «ազգային անվտանգության խորհրդի» անդամ Այաթոլլահ Քաշանին հայտարարեց, որ Սադդամի վարչակարգը դատապարտված է կործանման: Սակայն, Խորհրդարանի նախագահ Ռաֆսանջանին, չցանկանալով բաց

թողնել երկիրը վերականգնելու համար ընձեռնված հնարավորությունը, Իրաքի հետ առնչվող բոլոր հարցերում չափազանց ըզգուշավոր է:

Բայց եւ այնպես ելույթների ժամանակ նախագահը չի կարողանում թաքցնել իր համակրանքը Իրաքի շիա մահմադականների նկատմամբ, եւ կոչ է անում Սադդամին ունկնդիր լինել ժողովրդի կամքին:

Իրաքում կրոնական վարչակարգ ստեղծելու հնարավոր համար անհանգստացած են ԱՄՆ-ն եւ Մադրիս Արաբիան, բանի որ Թեհրանին հավաստարիմ վարչակարգ ստեղծելու դեպքում Պարսից ծոցում հօգուտ Իրանի կիսաօտարի ուժերի հավասարակշռությունը: Ուստի եւ Արեւմուտքը այդ վտանգը քայքայելու համար շանք չի խնայի:

Գրիգոր Առաքելյան Իրանագետ







# Քանի դեռ ուշ չէ

«ԻԶՎԵՍՏԻԱ»

Գեռ ուշ չէ նախապատրաստել նոր մի-  
ութենական պայմանագրի իրավաբանորեն  
գրազեռ նախագիծ: Մարտ ամսվա տարր-  
րակը նշանակալից չափով լավ է նշան-  
բերյալ տարրերակից: Դրա հետ միասին  
նախագիծը հետո է կատարյալ լինելուց:

Առաջին հերթին Միության անվանումը:  
Հիմա այն դարձել է լիովին անորոշ:  
«ԽՍՀ Միություն»ը հնչում է չափից ավելի  
քաղաքականացված: Իսկ «Ամերիկայի Մի-  
ացյալ Նահանգներ», «Գերմանիայի Դեմո-  
կրատիկ Հանրապետություն», «Ավստրալի-  
ական Միություն» անվանումները հնչում  
են ոչ քաղաքականացված և աշխարհա-  
գրորեն որոշակի: Լավ կլինի մեր ֆեդե-  
րացիան անվանել *Եվրասիական Միություն*  
(ԵԱՄ): Այդպիսի անվանումը համապա-  
տասխանում է բոլոր չափանիշներին: Այն  
կրավարարի ինչպես ֆեդերացիայի պաշտ-  
պաններին, այնպես էլ կոնֆեդերացիայի  
կողմնակիցներին: Նախագծի գլխավոր թե-  
րությունը մեծ ծավալն է և իրավաբա-  
նորեն ավելորդ մանրամասնումը: Այդպիսի  
փաստաթուղթը պետք է լինի ոչ թե ծավա-  
լուն, այլ տարողունակ:

Այնուհետև, նախագիծում հայտնվեց Մի-  
ություն և հանրապետությունների «համա-  
տեղ» իրավասությանը վերաբերվող հոդ-  
վածք, որով Միությունը ստիպված է լինե-  
լու իր քաղաքականությունը համաձայնեց-  
նել հանրապետությունների հետ նույնիսկ  
իր քաղաքականության հարցերում:  
Արդյունքը կլինի այն, որ մեր կունենանք  
թույլ կենտրոն - թույլ երկիր - թույլ  
հանրապետություններ: Հարկավոր է հստակ  
նշել Միության լիազորությունները, իսկ  
մնացածը թողնել հանրապետություններին:

Նախագիծում որպես Միության սուբյեկտ-  
ներ համարվում են և այն հանրապետու-  
թյունները, որոնք ուրիշ հանրապետություն-  
ների կազմում են: Սակայն ինքնավար  
մարզերի և հանրապետությունների անկա-  
խացումը շահավետ է միայն տեղացի  
պոլիտիկաների համար, որոնք դառնում  
են ռեզիդենտ արքայիկներ. լոկ խստով  
վերականգնման կողմնակիցներ. իսկ գոր-  
ծով՝ հակառակորդներ: Այդ անկախացումը

տեղի է ունենում անօրինական, առանց  
հանրաքվեի, միութենական հանրապետու-  
թյունների կամքին հակասակ: Անկախա-  
ցումը նույնպես հակասակում է Միութենա-  
կան պայմանագրի նախագծի 5-րդ սկզբ-  
բունքին, որի համաձայն հանրապետու-  
թյունները «ինքնուրույն են որոշում իրենց  
ազգային-պետական և վարչական-տա-  
րածքային կառուցվածքը, իշխանության և  
կառավարության մարմինների համակար-  
գը»: Ուրեմն միութենական խորհրդարանում  
պետք է ներկայացված լինեն միայն միու-  
թենական հանրապետությունները:

Պայմանագրի նախագիծում անհրաժեշտ  
է փոխել՝ նաև Միության մարմինների  
(հատկապես գործադիր և դատական)  
կազմավորման նկատմամբ մոտեցումը: Դր-  
անք պետք է լինեն ինքնուրույն և բավա-  
կանին հզոր: Միության պրեզիդենտին ըն-  
տրելու համար այնուամենայնիվ բավական  
է բոլոր ընտրողների ձայների մեծամաս-  
նությունը:

Միության նախարարների կարիքները,  
Գերագույն Դատարանը, Գերագույն արքի-  
տրաժային դատարանը, Միության դատա-  
խազության կոլեգիան պետք է աշխատեն  
առանց այն հանրապետությունների ներկա-  
յացուցիչների, որոնք ունեն վճռական ձայ-  
ների իրավունքը: Այլ կերպ ցրանք կղա-  
նան շատ քաղաքական, բազմաձև, անվճ-  
ռակներ և ոչ օպերատիվ:

Եվ վերջապես, ֆեդերացիայի խորհուր-  
դը, եթե մեա Միութենական պայմանագր-  
ում, պետք է ունենա միայն խորհրդակ-  
ցական մարմնի կարգավիճակ: Այլ կերպ  
այն կմրցակցի Միության այլ մարմինների  
հետ և կարող է խախտել իշխանության  
բաժանումը: Միության համար երեք իշխա-  
նություններ բավարար են:

Միութենական պայմանագիրը պետք է  
սկիզբ դնի ֆեդերացիայի սկզբունքների  
վրա հիմնված ազատ մարդկանց հզոր  
միությանը, ոչ թե կայսերապետական իշ-  
խանությունների խառնակույտի:

Գ. ՆԻԿԵՐՈՎ

Իրավաբան, ԱՄՆ-ի և Կանադայի  
ինտերնացիոնալ ավագ զիտաշխատող

Ռուսաստանի հետ պայքարում կենտրոնը  
դիմաց հին, բայց շատ արդյունավետ միջո-  
ցի. «բաժանիր, որ տիրես» նշանաբանով:  
Դա նշանակում է, որ փորձում են փլուզել  
հանրապետությունը իր իսկ ինքնավար  
կազմավորումների օգնությամբ. սրանց խո-

Դարձյալ կրախվենք ազգամիջյան ընդհա-  
րումների նոր հորձանքի:

Բացի դրանից, ինքնավարությունների  
վրա հույս դնելը կարող է հոգս ցնդեցնել  
Միութենական պայմանագիրը: Կարծում են,  
որ մարտի 28-ին սկսվող համագումարի

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՌՈՒՄԱՍՏԱՆԸ

Ս. ՇԱԽՐԱՅ. ՌԻՅՄԻ ժողովածու

ստացել են միութենական հանրապետու-  
թյան կարգավիճակ: Միութենական պայմա-  
նագրի առաջին հոդվածում ասվում է. ԽՍՀ  
Միությունը կազմող հանրապետությունները  
մտնում են նրա մեջ անմիջականորեն կամ  
ուրիշ հանրապետության կազմում: Բայց  
այդ հարցի վերաբերյալ վերջնական որո-  
շումը ընդունում է ինքը՝ հանրապետությու-  
նը: Այժմ Ռուսաստանից կախված չէ, թե  
կլինի՞ այս կամ այն ինքնավարությունը  
ՌԻՖՍՀ կազմում, թե՞ ոչ: Պայմանագրի  
նախագծի 10-րդ հոդվածում հաստատվում  
է հանրապետական օրենքների առաջնու-  
թյունը միութենականների նկատմամբ բոլոր  
հարցերում, բացի նրանցից, որոնք հանրա-  
պետությունները հանձնել են ԽՍՀ Միու-  
թյան տնօրինությանը: Թվում է, թե լավ  
ծեակներսում է, ինչը հնարավորություն է  
տալիս ղուրս գալ «օրենքների պատերազ-  
մից»: Սակայն 10-րդ հոդվածում խուսրը  
գնում է ընդհանրապես հանրապետությու-  
նների մասին: Հնարավոր է, որ այնպես ըս-  
տացվի, որ այն հանրապետությունների օ-  
րենքները, որոնք դեռ ՌԻՖՍՀ կազմում են,  
լինեն ավելի առաջնային քան Ռուսաս-  
տանյան ֆեդերացիայինը: Այսօր այդ ամ-  
բի հետևանքները պարզապես անհնար է  
կանխագուշակել: Բոլոր մեր ինքնավարու-  
թյուններում ռուսները կազմում են մեծա-  
մասնություն կամ մեծաթիվ փոքրամասնու-  
թյուն: Նրանք կարող են քարձրացնել ռուս  
ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարցը:

ժամանակ Ռուսաստանի ազգային պետա-  
կան կառուցվածքի քննարկումը պետք է  
նախորդի Միութենական պայմանագրի քնն-  
նարկմանը: Ռուսաստանը պետք է սկզբից  
ենթ որոշի իր կառուցվածքը և միայն դը-  
րանից հետո ստորագրի Միութենական  
պայմանագիրը: Կենտրոնն էլ ձգտում է (և  
այդպիսի մոտեցման կողմնակիցներ կցտն-  
վեն համագումարում) խթանել Միութենա-  
կան պայմանագրի ստորագրումը ինքնավար  
ությունների միջոցով: Ի՞նչ կատարվի,  
ռուսական ինքնավարությունների տասնվեց  
ձայները ընդդեմ Բելոռուսիայի, Ղազախ-  
ստանի կամ այլ հանրապետության մեկ  
ձայնի: Միութենական հանրապետությու-  
նները դրան չեն գնա:

Այսօր անկախության գաղափարը միու-  
թենական հանրապետությունների համար  
ծառայում է որպես երկու գործընթացի  
«հագուստ»՝ ազգային ինքնագիտակցու-  
թյան աճի և հանրապետությունների պայ-  
քարի ընդդեմ կենտրոնի, որը դիմադրում է  
արձատական վերափոխումների: Եթե շեշ-  
տը դնենք կենտրոնի դեմ պայքարի վրա,  
կմեղադրեն Միությունը ոչնչացնելու փոր-  
ձերի մեջ: Եթե շեշտը դնենք ազգային  
գործունի՝ ռուսական վերածնման գաղա-  
փարի վրա, ապա ազգային հանրապետու-  
թյունները զա կարող են մեկնարանել որ-  
պես ձգտում դեպի գերիշխանություն, այ-  
ժույան կենտրոնի տեղը նորոգված Միու-  
թյունում գրադեցնելու ցանկություն: □

### ՄԱՐԶԱԿԱՆ

### ՄՐԱՐԱՏՅԻՆԵՐԸ ՍՈՏԻԿԻՅ

### ԵՐԿԱՆԴ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մնվել է 1967 թվականի հունվարի  
20-ին, երեսնամյա: Ավարտել է Արուխանի  
«Ավտոմեքանայարահային» տեխնիկումը: Սո-  
վորում է Երևանի Ֆիզիկական կուլտուրա-  
յի ինստիտուտի առաջին կուրսում: Պաշտ-  
պան է: Բարձրագույն խմբում անցկացրել է  
57 խաղ, խփել երեք գնդակ: Նրա  
ֆուտբոլային ուղին սահուն է. հանրապե-  
տության պատանեկան հավաքական - Հա-  
յաստանի առաջնություն - «Օլիմպիա» -  
«Կոտայք» և 1988 թվականից՝ «Արար-  
ատ»:

Մինչև «Արարատ» տեղափոխվելու  
միջև խաղացել են հարձակման գծում:  
«Արարատ»ում էլ մի քանի անգամ հան-  
դես եկա առջևի գծում, բայց հետո, ինձ  
համար անսպասելի Անդրեասյանը որոշեց,  
որ պետք է խաղամ պաշտպանության աջ  
թևում: Ես սիրում եմ մասնակցել գրո-  
հներին և ինձ համար նման վճիռը սկզբ-  
ում շատ խորթ էր, բայց աստիճանաբար  
հարմարվեցի և, երևի պաշտպանությունում  
հիմա ավելի օգտակար եմ թիմին:

- Ի՞նչ ես կարծում որպես ֆուտբոլիստ  
եղբայրդ՝ Վարդանեկը ևր ուժեղ, թե՞ դու:

- Մինչև այսօրվա խաղամակարդակ  
Վարդանեկը: Նա ավելի արագ էր, ավելի  
արդյունավետ: Ափսոս, որ ժամանակին  
«Արարատ»ում չխաղաց: Բայց փոխարենը  
10 տարի հույսով և հավատով ծառայեց  
«Կոտայք»ին:

- Ո՞ր խաղն է քեզ համար ամենամի-  
ջաբանը:

- «Արարատ»ի կազմում հենց առաջին  
հանդիպումը: 1988 թվականին Մոսկվայում  
մրցում էին «Ապարտակ»ի հետ (մինչ այդ  
Սոցիալում 15 րոպե մասնակցել են  
«Գերմոնորեց»ի հետ խաղին): Դաշտի տե-  
րերը խաղը շահում էին 1:0 հաշվով: Հան-  
դիպման ավարտին մնում էր երեք րոպե,

երբ ինձ հաջողվեց գրավել Դասանի  
պաշտպանած դարպասը: Խաղն ավարտվեց  
ոչ-որի 1:1: Պատկերացնում եք իմ հոր-  
ճվանքը:

- Լսել եմ, որ նշանվել ես...

- Դա ուրիշ պատմություն է: Ապագա  
աներս կտրուկ դեմ էր: Ասում էր՝ ես  
ֆուտբոլիստի աղջիկ չեմ տա. ամբողջ  
տարին տանը  
չես լինի: Նույ-  
նիսկ սպասում  
էր: Հետո փափ-  
կեց: Հիմա ֆուտ-  
բոլասեր է դար-  
ձել:

- Իսկ մա՞յրդ:

- Ինձ մայրս  
միշտ ինձ Վա-  
րուժանի համար  
էր ցավում. հան-  
կարծ չի փնձե-  
հանկարծ վճա-  
վածք չստանա:  
Հիմա էլ՝ ինձ  
համար: Անցյալ  
տարի, երբ Վոլ-  
գոգրադում «Ռո-  
տոր»ի հետ խա-  
ղում վնասվածք  
ստացա և ինձ

դաշտից հանցեցին, որի մասին ասվեց ռե-  
պորտաժում, մորս սիրտը վատացավ: Ինչ-  
րում եմ, հատկապես արտագնա խաղերում,  
եթե հանկարծ վնասվածք ստանամ, էլ ռա-  
դիոտեպորտաժներում չասեք:

- Որո՞նք են «Արարատ»ի առավելու-  
թյունները և թերությունները:

- Մենք համերաշխ ենք, մեր սկզբունքն  
է. մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար:  
Սակայն խաղը «կապող» չունենք: Խորիկի  
պես խաղացող չունենք:

- Ի՞նչ ես կարծում, «Արարատ»ը,  
ո՞ր տեղին կհավակնի:

- Անցյալ տարվա համեմատ, մենք հա-  
տուսացել ենք. 4-ից 6-րդ տեղերը ռեալ  
են:

- Անցյալ տարի քեզ հրավիրեցին  
ԽՍՀՄ հավաքական և 15 օր նույնիսկ

մասնակցեցիք Իտալիայում կայացած  
հավաքին: Որքե՞ խորակներում եկա-  
տե՞լ ես քո նկատմամբ:

- Մարզիչների կողմից՝ ոչ, բայց խա-  
ղացողների կողմից՝ այո: Խմբավորումներ  
կային, սպարտակցիները առանձին էին,  
Կիևի դիմադրյալները՝ առանձին: Ինձ  
համար շատ խորթ էր, ոնց որ միայնակ  
լինի: Միակը Ուլարովն էր, որ հույս էր  
տալիս: Մասնակցել եմ երկու ընկերական  
խաղի: Հանդես եմ եկել Վիլյուի և Ման-  
չիեի դեմ: Ինձ համար այդպես էլ ան-  
հասկանալի մնաց, թե ինչու Իտալիայից  
հետո Բիշոփեյն ասաց՝ պատրաստվիր,  
բայց այնպես չհրավիրեց: Խնարկեց ես էլ  
կաշկանդված էի, քանի որ առաջին հա-  
վաքն էր:

- Ինչպիսի՞ն է նյութական հավաքա-  
կանում և «Արարատ»ում:

- Հավաքականում հիմա ամենամեծատ  
լավ է, առավել ես, որ հիմա վարձատը-  
րում եմ նաև վալյուտայով: Իտալիայի  
երկու ընկերական խաղի համար յուրա-  
քանչյուրիս տվեցին 1400-ական դոլար:

«Արարատ»ում բարձրագույն խմբի մյուս  
թիմերի համեմատ վարձատրությունը միջին  
մակարդակի է: Օրինակ, «Տորպեդո»ն, որի  
հովանավորն է «Կոդակ» հանրահայտ ֆի-  
րման, բարձրագույն խմբի առաջնությունում  
հաղթանակի համար յուրաքանչյուր ֆուտ-  
բոլիստի տալիս է 200-ական դոլար և  
1000-ական ռուբլի պարգև: Իսկ մենք էլ  
չենք կարողանում գտնել 5000 դոլար, որ  
գոնե խաղակողները գնենք: □

**ԲՍՍԿԵՏՐՈՆ**  
ԽՍՀՄ կանանց առաջնություն  
Բարձրագույն խումբ  
Մարտ 28, հինգշաբթի  
«Պատիս» - «Դինամո» (Վոլգոգրադ)  
70 : 69 (38 : 36)

Բաժինը վարում է Ս. ԲԱԳԿԱՍՏՅԱՆԸ

### ՏԻԿԻՆ ԹԱՅՍՈՆԸ ԱՍՈՒՄՆԱԼՈՒԹՈՒԹՅԱՆ ՉԱՄԱՐ ՊԱՅԱՆՋՈՒՄ Է...

Պրոֆեսիոնալ սպորտում գնալով եկա-  
մուտներն ավելանում են երկրաչափական  
պրոգրեսիայով: Օրինակ Պատիկին և  
Ֆրանսիայի մեր հայրենակից Պրոստը 500  
անգամ ավելի են վաստակում, քան ժա-  
մանակին՝ 60-ական թվականների աշխար-  
հառչակ ֆուտբոլիստ Կոպան:



Պրոֆեսիոնալ բուսքամարտի ծանր քաշի  
աշխարհի նախկին չեմպիոն ամերիկացի  
Մայք Թայսոնը, միայն 1988 թվականի  
մրցաշրջանում 26 միլիոն դոլլարի եկա-  
մուտ է ունեցել: Նրա կիևը շուրջ քիլոսեսի  
հայտնի դերասանուհի է: Տիկին Թայսոնը  
նույնպես վայրայած է, որ անվանի մար-  
զիկները ավելի շատ դրամ են վաստա-  
կում, քան շուրջ քիլոսեսի մասնակիցները:  
Բայց գնալով մեծանում են նաև եկա-  
մուտահարկերը: Վերջին ժամանակներս Թայ-  
սոն ամուսինների փոխհարաբերությունները  
սրվել են և տիկին Թայսոնը ամուսնա-  
լուծության համար պահանջում է 25 միլի-  
ոն դոլլար: □



Խմբագրական

ՍԱՅՔԱՐԱՄ-Ը ԼԵԶՈՒ. ԹԷ՝ ԼԵԶՈՒԻ ՍԱՅՔԱՐՈՒՄ

Հայոց համազգային շարժման Գախազան, ժողովրդական պատգամավոր Վահո Սիրադեղեանի մարտի 23-ի հանրահավաքի ընթացքում արտասանած խոսքերն այն մասին, թե շարժումն արտաբերում է քաղաքական ընդդիմությունը պատասխանել դիկտատուրայի հաստատման փորձով, վրդովմունք առաջացրեց ներսում ու դրսում գտնուող քաղաքական շրջանակներին եւ տարակուսանք առհասարակ մեր ժողովրդի մոտ:

Այդ խոսքով ինչ էր ուզում ասել նա: Սպանելով: Բայց ո՞ւմ դէմ: Անփական ժողովրդի, թե՛ նույնիսկ Հայոց համազգային շարժման ու նրա գլխավորած ազգային նորաստեղծ իշխանության, որ 70 տարի անց ի վերջոյ հաստատուելով ժողովրդավարական-դեմոկրատիկ հիմունքներով ու փորձելով արմատաորոշել նույն այդ հիմունքները Հայաստանում, դիկտատուրայի հաստատումով կը զրկուի նույնիսկ իր գոյութեան իրաւունքից, գոյութեան պատճառից:

Մենք վստահ ենք, որ ՀՀԸ-ի Գախազանի այդ խոսքերն արդիւնք են ունենց այդ պահին խառնարկի: Գերկայութեան անթափ շղայնոտութեան, ինչ որ, սակայն, թույլատրելի չէ քաղաքական դեկավարին: Մենք համոզուած ենք, որ այդ արտապայտուքինը արդիւնք է ոչ թէ դէպի դիկտատուրաները սալթաբելու իրական տրամադրութիւնների, այլ՝ լեզուի սայթաքման: Ինչ որ, լամենայն դէպս, նույնպես թույլատրելի չէ քաղաքական որեւէ գործչի:

Հետեւաբար, անհրաժեշտ է հրապարակային լուսարարութիւն տալ եւ հանգստացնել խռովեալ բոլոր մտքերը:

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 28-ին Հայաստանում տեղի ունեցավ երկրաշարժ: Էպիկենտրոնը գտնվում էր Սեւան լճի հատակում: Այնտեղ ստորգետնյա ցնցման ուժը կազմեց 6 բալ ըստ Ռիխտերի 12 բալանոց սանդղակի: Ցնցումները զգացվել են նաև Սեւանի ավազանին կից շրջաններում: Վնասվել են որոշ շենքեր, ջարդվել են պատմամենաբանական անուշահամեր: Մարդկային զոհեր չկան:

ԲԵՅՐՈՒԹ

ՊԱՅՔՈՒՄԻՅ ՏՈՒՅԷԼ Է ՆԱԷՒ ՀԱՅՈՑ ԿԱՅՈՒԿՈՍԱՐԱՆԸ

Մարտի 20-ին Բնյուրի արվարձաններից Անթրիպատում Լիբանանի պաշտպանության նախարար Միշել Մըրի դեմ կազմակերպված մահափորձից (որի ընթացքում մեքենայի պայթյունից սպանվել էին 10 հոգի, որոնց թվում 5 հայեր), տուժել է նաև մտակալքում գտնվող Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանը:

Ըստ կաթողիկոսարանից ստացված մի հեռագրի, պայթուցի ալիքը խորտակել է վանքի գրասենյակների ու կացարանների պատմամենաբան ու դռները, վնասվել են Գարեգին Բ. կաթողիկոսի գրասենյակին: Բարեբախտաբար վանքի մերսում ոչ ոք չի տուժել:

ՓԱՐԻԶ

Մարտի 24-ին Փարիզում տեղի ունեցավ «Տրիպոլիս» երաժշտական ընկերակազմի կազմակերպած վոկալիստների 56-րդ տարեկան մրցույթը, որին մասնակցում էր նաև Հայաստանից Մուսաննա Մարտիրոսյանը, նվագակցությամբ Զեմֆիրա Բարսեղյանի:

Տաղանդավոր զույգն արժանացավ դասակարգի հատուկ մրցանակին՝ որպես երգ-դաշնամուր լավագույն կատարում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻԱ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ 40 ՈԱԶՍՕՂԱՆԱԿ Է ՏՐԱՄԱՂՈՒՄ ԹՈՒՐԻԱՅԻՆ

Միացյալ Նահանգները Թուրքիա են տեղափոխել F-4E 40 ռազմաօդային զորքի հավելյալ ռազմական օգնություն Մոցի պատերազմից հետո, հայտարարեց երկու-շաբթի, 25 մարտ, ԱՄՆ պաշտպանության Միացյալ Նահանգների ղեկավարը: Այս տեղեկությունը հաղորդվել է շաբաթավերջին Վաշինգտոնում նախագահ Զորք Բուշի եւ Թուրքիայի Օզալի քանակություններից հետո, որոնք հիմնականում ձևավորված էին նույնպատերազմական դրությամբ եւ Թուրքիային ամերիկյան օգնությամբ: Առաջին F-4E ռազմաօդայինը պետք է ԱՄՆ արևելյան 230 կմ արևելք գտնվող Էսքիշեհիրի թուրքական օդանավակայանից հասնի: F-4E օդանավները ամենաշատ գործածվողներն էին Վիետնամական պատերազմի ժամանակ:

ՌՈՅՔՐ


«ՖԻԳԱՐՈՅԻ» ԹՂԹԱԿԻՑ ԹՈՒՐԻԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ Է ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻ

Ֆրանսիական «Ֆիգարո» թերթը իր 14 մարտի համարում գրում է, թե թերթի սեփական թղթակից Բաալիե Գոթին Անատոլիայի Նուսայրի գյուղի ոստիկանության կողմից ենթարկվել է քիտ խոշտանգումի: Թերթը հայտնում է, թե Գոթին, որ քրդական մի ցույցի առնչությամբ Նուսայրիում էր գտնվում, իր երկու ընկերների հետ արտաքուր է գյուղից, այն դեպքում, երբ նա ուներ թուրքական կառավարության պաշտոնական արտոնությունը: «Ֆիգարոյի» թղթակիցը ստացած վերքերից հետո ենթարկվել է բժշկական խնամքի, առանց սակայն որեւէ քայքայություն ստանալու ոստիկանության այդ արարքի համար, որին զոհ է գնացել: Շուրջ 100 երիտասարդներ «կեցցե՛ք Բուրդիստանը» բազակալուծություններով Նուսայրիում երթ են կատարել, որի ընթացքում, ըստ նրա, 160 հոգի ձերբակալվել են: Գոթին չգիտի թե վիրավորներ կա՞ն արդյոք:

ԱՄՍԿՎԱ

ՅՐԴԵՅ ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՍԳՆԱՆԱՆԸ

Մոսկվայի Մայակովսկու փողոցի վրա գտնվող ամերիկյան դեսպանատանը մարտի 28-ի առավոտյան հրդեհը բռնկվեց: Ժամը 10:15-ին դեպքի վայրը ժամանեցին առաջին հրշեջ մեքենաները, որոնց թիվը հասավ 28-ի: Մոտ 40 րոպե դեսպանատան աշխատողները չէին թողնում հրշեջներին մտնել շենքի մերսը: 180 հրշեջները,



որոնք մի քանի ժամ պայքարեցին 10 հարկանի շենքի տանիքում տարածված կրակի դեմ, միայն 12:32 րոպեին կարողացան այն մարել: Դեսպանատան 400 աշխատողներ տեղափոխվեցին, մեկ ամերիկացի ծիսիք թունավորվեց: Այլ տուժածներ չկան: Հրդեհի պատճառը չենքի վերնակում տարվող գոզման աշխատանքներն են: Հավանական է, որ դեսպանատանը իր աշխատանքները կշարունակի հարևան թաղամասում գտնվող նոր շենքում:

interfax

Մամլոտ առուլիս Վրաստանի Գերկայացուցչությունում

Մեր հատուկ թղթակից ՀԱԿՈՒ ԱՍՍՏՐԹԱՆ, Մոսկվա, 29 մարտի 1991

«Վրաց ժողովուրդը կրեոլի անկախությունը» հայտարարեց մարտի 27-ին Մոսկվայում Վրաստանի կառավարության մշտական ներկայացուցչությունում կայացած մամլո ասուլիսում հանրապետության արտաքին գործերի նախարար Գեորգի Խոշտարիան: Ասուլիսի հիմնական թեմաներն էին մարտի 31-ի հանրապետական հանրաքվեն եւ Ելչին-Գամսախուրդիա հանդիպումը: «Ազգ»-ի այն հարցին, թե ի՞նչ քայլերի կդիմի Վրաստանի կառավարությունը հանրաքվեի ավարտից հետո, նախարարը պատասխանեց. «Մենք հավատացած ենք, որ արդյունքները կլինեն դրական: Վրաց ժողովուրդը իր պետության անկախության վերականգնմանը առանց տատակվելու կտա դրական պատասխան»: Նախարարը պատմեց նաև երկու հանրապետությունների նախագահների կապերկյան հանդիպման մասին, նշելով, որ նրանք կարողացան զալ համաձայնության: Խոշտարիան ժխտեց, թե իբր հակամարտություն գոյություն ունի Վրաստանի եւ Ռուսաստանի միջև: «Ու առկա է միայն կենտրոնի եւ հանրապետությունների միջև: Վրացիներն ու ռուսները հարեաններ են եւ ամեն ինչ պետք է անել, որպեսզի երկու եղբայր ժողովուրդների կապերը չխզվեն: Ինչ վերաբերում է այսպես կոչված օսեթական հարցին, ապա այն հանրապետության ներքին գործն է եւ այդ վեճը պետք է լուծենք մեր ուժերով: Կենտրոնը դժվարաբար հարցի լուծումը: Մնգամ պրեզիդենտ Գորբաչովը Գամսախուրդիայի հետ հեռախոսային պրոյեկտ մասնակ հայտարարեց, թե եթե շտորագրենք միութենական պայմանագիրը, ապա վատ կլինի: Մյուսին էլ եղավ: Մյուս իրադրությունը վրաստան է նաև: Չավախում»:

Մեր այն հարցին, թե ո՞րն է դրա բուն պատճառը եւ ինչպես է կառավարությունը ձգտում լուծել այդ հարցը՝ Խոշտարիան պատասխանեց.

«Այնտեղ արդեն ստեղծվել է ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ մտնում են 26 մարդ: Ժամանակավոր կառավարությունը պետք է զլխավորի Մամվել Դեթրոսյանը: Դայտի է, որ այս քայլին հայերը դիմեցին վրաց կառավարության կողմից տր արեֆեկտ նշանակելուց հետո:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու առաջին ուղին բանակցություններն են: Մեր հայ եղբայրները պետք է հասկանան, որ դա կենտրոնի, Գորբաչովի սարքածն է: Ե՛ւ հայ, ե՛ւ վրացի ժողովուրդների դա ձեռնտու չէ: Մենք մի սկզբունք ունենք, այն է՝ Վրաստանում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունները պետք է մշակության ինքնավարություն ունենան, պարզապես թատրոնը, դպրոցները եւ այլն: Միայն խաղաղ ճանապարհով մենք կարող ենք հարթել այդ հարցը: Աստված շահի, Չավախում արյուն թափվի: Մենք ամեն ինչ պետք է անենք, որ մեր եղբայրությունը ու բարեկամությունը չխախտվի»:

Այնուհետեւ հանրապետական ընտրական հանձնաժողովի նախագահ Արշիլ Ջիրակաձեն ծանոթացրեց հանրաքվեի հետ կապված հարցերին, նշեց, որ հրավիրվել են հասարակական դիտողներ տարբեր արտասահմանական երկրներից, հարեան հանրապետություններից: Ընտրողների ընդհանուր թիվը 3 մլն. 400 հազար է: Ըստ նախական ենթադրության՝ 82 տոկոսը կըվեարկեն անկախ պետականության օգտին: Դանրաքվեի նախնական արդյունքները հայտնի կդառնան հաջորդ օրը առավոտյան, սակայն կձգտվեն երեքօրյա ժամկետում:

«Մենք կարծում ենք, որ Վրաստանի ճակատագիրը պետք է որոշեն ոչ միայն վրացիները, այլեւ մյուս ազգությունների ներկայացուցիչները, որոնք ապրում են մեր հանրապետությունում»,- հայտարարեց հանձնաժողովի նախագահը:

ԱԶԳ եռօրյա թերթ. հասցեն՝ Երևան 375010, Ալավերդյան 47 հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941  
semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010  
phone: 58-18-41, fax: (8852)562941

Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ  
Editor H. AVEDIKIAN

Կոմպյուտերային հրատարակություն  
Լույս է տեսնում շրեքշաբթի, շաբաթ  
Ղափի՝ 69149 Գիւղ՝ 30 կրպ.

